

12.05.2017 10:00



ՀՀ փաստաբանների պալատը եւ «Մանանա» մասնապատանեկան կրթամշակութային կենտրոնը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան ընդառաջ հայտարարում են մրցույթ 7-ից 17 տարեկան երեխաների համար: Մրցույթը անցկացվելու է երեք անվանակարգերում՝ լուսանկարներ, էսսեներ և ֆիլմերի սցենարներ:

Լուսանկարներ

Լուսանկարչական մրցույթի խորագիրն է «Հայաստանի երեխաները»: Յուրաքանչյուր մասնակից կարող է մրցույթին ներկայացնել 1-ից 5 լուսանկար, որոնք կպատկերեն տարբեր տարիքի երեխաների կյանքը թե լավ, թե վատ կողմերով: Լուսանկարների չափը պետք է լինի առնվազն 1 MB: Լուսանկարների հետ պետք է նաեւ ուղարկել կարճ նկարագրություն, նշելով, թե ով է պատկերված, որտեղ եւ երբ է արվել լուսանկարը:

Էսսեներ

Էսսեների մրցույթի թեման է «Իմ իրավունքները եւ ինչպես են դրանք պաշտպանվում»: Նախապատվությունը կտրվի այն էսսեներին, որոնք կներկայացնեն որեւէ մեկ իրավունք կոնկրետ, իրական օրինակով: Նյութերի ծավալը պետք է լինի առավելագույնը 500 բառ (մոտ մեկ համակարգչային էջ):

Ֆիլմի սցենարներ

Սցենարների մրցույթի թեման է «Երեխաների իրավունքները»: Սցենարը պետք է նախատեսված լինի մեկ թույնաց ֆիլմի նկարահանման համար: Այն կարող է վերաբերվել թե որեւէ կոնկրետ իրավունքի, թե կարող է արտահայտել երեխայի իրավունքների եւ դրանց պաշտպանության կարեւորությունը ընդհանրական ձեւով: Սցենարը պետք է նկարագրի, թե ինչ ենք մենք տեսնելու եւ լսելու ֆիլմում: Սցենարի առավելագույն ծավալը պետք է լինի մեկ համակարգչային էջ:

Կարելի է մրցույթին մասնակցել ինչպես մեկ, այնպես էլ բոլոր անվանակարգերում:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն հունիսի 1-ին, եւ տարբեր անվանակարգում ժյուրիի կողմից լավագույն ճանաչվածները կպարգեւատրվեն

մրցանակներով, լավագույն էսսեներն ու
լուսանկարները կհրապարակվեն, իսկ հաղթող ֆիլմի
սցենարի հիման վրա կնկարահանվի ֆիլմ հեղինակի
մասնակցությամբ:

Ինչպես ուղարկել

Մրցույթի նյութերը կարող եք ուղարկել
17am.reporter@gmail.com կամ press@advocates.am էլ.
հասցեներին մինչև մայիսի 28-ը՝ թեմայի տողում
նշելով՝ «Մրցույթ»: Նամակում պետք է անպայման
նշել հեղինակի անուն, ազգանուն, հայրանուն,
տարիք, մարզ, բնակավայր, դպրոց, դասարան եւ
հեռախոսահամար:

Հարցերի համար կարող եք զանգահարել՝ 094536002
ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ
Ծովինար Խաչատրյանին:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })